Արձանագրություն N 2
Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կարիքների համար գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի գնման «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2018/17» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան «_12_» «_Փետրվարի_» 2018թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ	Մանյա Մխիթարյան
Հանձնաժողովի անդամներ	Միհրան Համբարձումյան
	Հասմիկ Մնացականյան
Հանձնաժողովի քարտուղար	Աննա Հարությունյան

1. ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2018/17 ծածկագրով մրցույթի հայտերի բացումը, օրը և ժամը

(Մ.Մխիթարյան)

1.1 «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2018/17» ծածկագրով մրցույթի հայտերը էլեկտրոնային ձևով www.armeps.am կայքի միջոցով բացվել են 2018 թվականի փետրվարի 5-ին, ժամը 11:00-ին:

2. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումների (անունների) և հասցեների հրապարակում

(Մ.Մխիթարյան)

2.1 Հայտեր ներկայացվել են հետևյալ մասնակիցների կողմից.

Մասնակիցների անվանումները	Հասցե
Արմքոմփվիններ ՍՊԸ	ք. Երևան, ադոնցի փ. 1 շ., բն. 7
Արվատեկ ՍՊԸ	ք.Երևան,պուշկինի 37/5
Սաքի ՍՊԸ	ք.Գորիս, անկախության 2/31
ՍՄԱՐԹԼԱՅՆ ՍՊԸ	ք. Երևան, վարդանանց 110

3. Հայտերը էլեկտրոնային ձևով կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության վերաբերյալ տեղեկություններ

(Մ.Մխիթարյան)

3.1 Մասնակիցների կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված փաթեթները կազմված էին հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Բացված յուրաքանչյուր էլեկտրոնային փաթեթում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ տեղեկություններ

(Մ.Մխիթարյան)

4.1 Մասնակիցների ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում էին հրավերով սահմանված պահանջներին, սակայն հրավերի 1-4-րդ, 7, 11, 12, 23, 24, 28 և 30-րդ չափաբաժինների գծով մասնակիցների ներկայացրած գները գերազանցում էին այդ գնման առարկաների համար նախատեսված ֆինանսական միջոցները, և, հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները, մասնակիցները հրավիրվել են գնային առաջարկների նվազեցման միաժամանակյա բանակցությունների 2018թ-ի փետրվարի 9-ին, ժամը՝

11:00-ին: Սակայն հայտ ներկայացրած մասնակիցներից ոչ մեկը չի ներկայացել բանակցությունների նիստին, և նոր գնային առաջարկ չի ներկայացրել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. Տվյալներ մասնակիցների կողմից ներկայացված գների և մասնակիցների զբաղեցրած տեղերի վերաբերյալ

(Մ.Մխիթարյան)

Մասնակիցների ներկայացրած գնային առաջարկների և զբաղեցրած տեղերի մասին տեղեկատվությունը կցվում է:

6. Տվյալներ հայտերի վերաբերյալ կատարված հարցումների և պատասխանների մասին

(Մ.Մխիթարյան)

6.1 Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

7. Հանձնաժողովը որոշեց՝

(Մ.Մխիթարյան)

7.1 «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2018/17» ծածկագրով մրցույթի 5, 6, 8-10, 13-16, 18-20, 25, 26, 29-րդ չափաբաժիններով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել <<Սմարթլայն>> ՍՊԸ-ին, 21, 22 և 27-րդ չափաբաժիններով՝ <<Արմքոմփվիններ>> ՍՊԸ-ին, 17-րդ չափաբաժնով՝ <<Արվատեկ>> ՍՊԸ-ին:

7.2 1-4-րդ, 7, 11, 12, 23, 24, 28 և 30-րդ չափաբաժինների գծով մրցույթը հայտարարել չկայացած, քանի որ հրավիրված բանակցություններին այդ չափաբաժնի համար հայտ ներկայացրած մասնակիցներից ոչ մեկը չի ներկայացել, իսկ մասնակիցների՝ հայտով ներկայացրած գները գերազանցում են այդ գնման առարկաների համար նախատեսված ֆինանսական միջոցները:

7.3 Ծանուցել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին հրավերով սահմանված կարգով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերը:

7,4 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել՝ «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2018/17» ծածկագրով մրցույթի 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների մասին պահանջվող տեղեկատվությունը ստանալու նպատակով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

8. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Մ.Մխիթարյան)

8.1 «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2018/17» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից եզրակացությունը ստանալուն հաջորդող աշխատանքային օրը, ժամը՝ 11:00-ին ՀՀ առողջապահության նախարարության (հասցեն՝ ք. Երևան, Կառավարական տուն 3) 2-րդ հարկում՝ նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Մանյա Մխիթարյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Միհրան Համբարձումյան

_____ Հասմիկ Մնացականյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Աննա Հարությունյան

Հ/Հ	Անվանումը	Նախահաշվային գին	Մասնակցի անվանում և առաջարկած գին								1-ին տեղ զբաղեցրած մասնակից
			Արվատեկ ՍՊԸ		Սաքի ՍՊԸ		Սմարթլայն ՍՊԸ		Արմքոմփվիններ ՍՊԸ		
			Գինը առանց ԱԱՀ	գինը ներառյալ ԱԱՀ	Գինը առանց ԱԱՀ	գինը ներառյալ ԱԱՀ	Գինը առանց ԱԱՀ	գինը ներառյալ ԱԱՀ	Գինը առանց ԱԱՀ	գինը ներառյալ ԱԱՀ	
1	թուղթ, A4 ֆորմատի /21x29.7/	679900	-	-	-	-	607987.50	729585.00	871667.00	1046000.40	Չկայացած
2	ռետին հասարակ	3000	19000	19000.00	-	-	8333.33	10000.00	6667.00	8000.40	Չկայացած
3	սոսինձ, էմուլսիա	6000	-	-	-	-	7500.00	9000.00	125000.00	150000.00	Չկայացած
4	թղթապանակ, արագակար, թղթյա	6000	-	-	-	-	6666.67	8000.00	8333.00	9999.60	Չկայացած
5	թղթապանակ, պոլիմերային թաղանթ. ֆայլ	17800	20400.00	20400.00	-	-	14166.67	17000.00	15000.00	18000.00	Սմարթլայն
6	թղթապանակ, կոշտ կազմով	20400	23400.00	23400.00	-	-	13500.00	16200.00	16250.00	19500.00	Սմարթլայն
7	թղթապանակներ	70500	171000.00	171000.00	-	-	60000.00	72000.00	112500.00	135000.00	Չկայացած
8	թուղթ նշումների համար, սոսնձվածքով	280350	224280.00	224280.00	-	-	86775.00	104130.00	233625.00	280350.00	Սմարթլայն
9	նոթատետրեր	57000	54000.00	54000.00	-	-	45000.00	54000.00	75000.00	90000.00	Սմարթլայն
10	գրիչ գնդիկավոր	42000	96000.00	96000.00	-	-	31250.00	37500.00	43750.00	52500.00	Սմարթլայն
11	գծանշիչ	21000	24000.00	24000.00	-	-	22500.00	27000.00	25000.00	30000.00	Չկայացած
12	շտրիխներ	21750	-	-	-	-	20000.00	24000.00	18750.00	22500.00	Չկայացած
13	սեղմակ, փոքր	5850	-	-	-	-	4875.00	5850.00	108333.00	129999.60	Սմարթլայն
14	սեղմակ, միջին	15400	-	-	-	-	12250.00	14700.00	233333.00	279999.60	Սմարթլայն
15	սեղմակ, մեծ	18240	-	-	-	-	14000.00	16800.00	360000.00	432000.00	Սմարթլայն
16	ամրակ	8500	12400.00	12400.00	-	-	6666.67	8000.00	10000.00	12000.00	Սմարթլայն
17	քանոն, պլաստիկ	2000	1800.00	1800.00	-	-	2000.00	2400.00	-	-	Արվատեկ
18	մատիտ, գրաֆիտե միջուկով, հասարակ	7200	12000.00	12000.00	-	-	5500.00	6600.00	105000.00	126000.00	Սմարթլայն
19	գրաֆիտե միջուկ, մատիտի համար	450	-	-	-	-	291.67	350.00	-	-	Սմարթլայն
20	դատարկ սկավառակ, առանց տուփի, CD	22500	18500.00	18500.00	-	-	16250.00	19500.00	25000.00	30000.00	Սմարթլայն
21	կարիչ, մինչև 20 թերթի համար	14400	11235.00	11235.00	-	-	12000.00	14400.00	10000.00	12000.00	Արմքոմփվիններ
22	կարիչ, 30-50 թերթի համար	36000	42000.00	42000.00	-	-	38750.00	46500.00	25000.00	30000.00	Արմքոմփվիններ
23	ապակարիչ	2700	-	-	-	-	2500.00	3000.00	4167.00	5000.40	Չկայացած
24	կարիչի մետաղալարե կապեր	16250	-	-	-	-	10416.67	12500.00	10417.00	12500.40	Չկայացած
25	նամակի ծրար	49000	50960.00	50960.00	39200.00	47040.00	32666.67	39200.00	408333.00	489999.60	Սմարթլայն
26	ծրար, մեծ, A4 ձևաչափի համար	48000	58500.00	58500.00	45000.00	54000.00	37500.00	45000.00	312500.00	375000.00	Սմարթլայն
27	կնիք, ավտոմատ, կլոր	18000	-	-	-	-	-	-	11250.00	13500.00	Արմքոմփվիններ
28	թանաք, կնիքի բարձիկի համար	2360	5600.00	5600.00	-	-	2166.67	2600.00	5833.00	6999.60	Չկայացած
29	թանաքի բարձիկներ	5600	-	-	-	-	4583.33	5500.00	-	-	Սմարթլայն
30	դանակ գրասենյակային մետաղյա	3000	-	-	-	-	3333.33	4000.00	-	-	Չկայացած

1-ին տեղ
2-րդ տեղ
3-րդ տեղ
4-րդ տեղ